Ազատ Գասպարյան



Կինոյի և թատրոնի անվանի դերասան, ՀՀ ժողովրդական արտիստ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, Եվրոպայի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Ծնվել է 1943թ. Երևանում:

1960թ. ավարտել է Արթիկ քաղաքի № 1 միջն. դպրոցը, 1970թ.՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական բաժինը՝ ուսանելով Վարդան Աճեմյանի արվեստանոցում:

1970-72թթ. աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, 1972-80թթ.՝ Դրամատիկական թատրոնում: Հետագա տարիներին աշխատել է «Հեռուստաթատրոնում», «Մետրո» թատրոնում:

1986թ.-ից ի վեր եղել է Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի դերասան:

Նկարահանվել է «Հայֆիլմի» և «Մոսֆիլմի» թողարկած 20 գեղարվեստական ֆիլմերում՝ «Հեղնար աղբյուր» (1970թ.), «Համագյուղացիները» (1974թ.), «Երկունք» (1976թ.), «Հուսո աստղ» (1978թ.), «Համր վկան›› (1980թ.), «Սիրո փոքրիկ պատմություն»(1981թ.), «Երջանկության մեխանիկա»(1982թ.), «Հին օրերի երգը» (1982թ.), «Վարսավիրը, որի քեռու գլուխը վարժեցված վագրը կրծել էր» (1983թ.), «Ճերմակ անուրջներ» (1984թ.), «Մեր մանկության տանգոն» (1984թ.), «Ո՞ւր ես գնում, զինվոր» (1985թ.), ‹‹Բառը›› (1987թ.), «Շնչառություն» (1988թ.), «Աստված իմ, ինչո՞ւ» (1989թ.), «Զանձրույթ» (1990թ.), «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» (1992թ.), «Органный концерт» (2000թ.), «Ուրախ ավտոբուս» (2000թ.) և այլն: Նկարահանվել է նաև 30 և ավելի հեռուստաբեմադրություններում, մասնակցել բազմաթիվ ռադիոբեմադրությունների:

Հյուրախաղերով հանդես է եկել տարբեր երկրներում՝ ԱՄՆ, ՌԴ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Լիբանան, Արաբական Միացյալ Էմիրություններ և այլն: Հեղինակել է «Իմ լեզվի տակ փուշ չկա» (2000թ.) գիրքը, մի շարք տեսա-ձայնասկավառակներ:

Մահացել է 2013թ. օգոստոսի 2-ին: